ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՇՀԱՊՁԲ-9/17-1

ք. Երևան 22-ը մայիսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Մեդիտեք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված № 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված № 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի № 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի №№ 1, 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 36,000,000 (երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված № 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10/12/2017թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №№ 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՌԲ վարչությունը:**

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<table>
<tr><td>

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊՈՏ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

</td><td>

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիտեք» ՍՊԸ
ք. Երևան, Ծ.Իսակովի 22/3
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/հ 193005184141010
ՀՎՀՀ 01222077
Տնօրեն
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

</td></tr>
</table>

Հավելված № 1
№ ՇՀԱՊՁԲ-9/17-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ.բ/հ	անվանումը	տեխնիկական ցուցանիշներ
1	Հատուկ մասնագիտացված մեքենաներ ***/ Ռեանիմոբիլ /***	Շտապ բուժօգնության մեքենա Mercedes-Benz Sprinter 515 CDI KA կամ համարժեք մակնիշի ավտոմեքենայի բազայի վրա: Փոխանցման տուփը - մեխանիկական «կոմֆորտ» տարբերակի, առնվազն ECO Gear 360 6-աստճանային. Ղեկի հիդրոուժեղացուցիչով Երթևեկման դինամիկ ստաբիլացման էլեկտրոնային համակարգ ընդլայնված կիրառություններով. Արգելակման հիդրավլիկ համակրգը – երկկոնտուրային. Արգելակման համակրգը հագեցված առնվազն - ABS ,ASR և EBD Արգելակման BAS համակարգով. Առջևի սռնին – կայունարարով Ետևի սռնին – մեղմիչով Սկավառակային արգելակներ արջևի և ետևի սռնիներում. Կայանելու արգելակ ետևի սռնու վրա DUO-SELF կամ համարժեք տարբերակի Անվային բազան - 43235մմ. +\- 50մմ. Անվային բանաձևը – 4x2 (ետնաքարշակ) Անիվների թիվը - 2 անիվ առջևի սռնու վրա, 4 անիվ ետևի. Անվասկավառակները – պողպատյա, 5.5Jx16 Անվադողերը – 205/75 R 16 C Լիակշիռ զանգվածը ոչ պակաս – 5000կգ. Ետևի սռնու բեռնվածությունը առնվազն - 3500 կգ. Շարժիչը –դիզելային, OM 651 DE 22 LA կամ համարժեք Շարժիչի հզորությունը ոչ պակաս -110 կՎտ. / 150 Ձ.Ու./ Շարժիչը հագեցված մրի զտիչով. Շարժիչը Euro 5 տարբերակի Վառելիքի բաքի տարողությունը ոչ պակաս – 75լ. Վառելիքի զտիչը ջրի բաժանարարով. Բժշկական խցիկի չափերը՝ Բարձրությունը ետևի դռան բացվածքում առնվազն 1800մմ Լայնությունը ետևի դռան բացվածքում առնվազն 1560 մմ. Երկարությունը կենտրոնում առնվազն 4500մմ. Բժշկական խցիկի պատերը պետք լինեն ջերմա և ձայնամեկուսացված: Հատակի պետք է ծածկված լինի վինիլային ծածքով: Բժշկական խցիկի դռներ - աջ կողմից՝ սահող, ետևից երկու՝ աջ և ձախ բացվող, բոլորի վրա պետք է լինի մեկական պատուհան: Խցիկի Լուսավորումը «ԼԵԴ» լուսատուներով, աշխատանքային և հերթապահ : Բժշկական խցիկը պետք է հագեցված լինի օդորակչով: Բժշկական խցիկը պետք է ունենա ոչ հարկադրական օդափոխության համակարգ և ջեռուցման սարք: Բժշկական խցիկում պետք է լինի առնվազն երկու բազկաթոռ բժշկական անձնակազմի համար և նստարան՝ երկու կամ ավելի ուղեկցողների համար: Խցիկի կահույքը պետք է ապահովի աշխատանքային հարմարավետությունը, տեղադրված սարքերի հուսալի ամրակայումը և շահագործումը: Մեքենան պետք է համալրված լինի շտապ բուժօգնության մեքենաներին յուրահատուկ արտաքին լույսային և ձայնային ազդանշանների համակարգերով, անհրաժեշտ գրառումներով և մակնշումներով: Մեքենան պետք է համալրված լինի տեսախցիկով և մոնիտորով՝ վարորդին ետընթացքի ժամանակ ճանապարհը տեսանելի դարձնելու համար: Բժշկական խցիկի մուտքի դռները պետք է ունենան աստիճաններ / մեկական ամեն մուտքի համար/: Բժշկական խցիկը պետք է անջատված լինի վարորդի խցիկից: Մեքենայի արտաքին հայելիները պետք է լինեն տաքացվող, իսկ տեսադաշտի կարգավորումը՝ էլեկտրական: Հալոգեն H7 ցոլաների լույսը պետք է լինի կարգավորվող;

		Վարորդի խցիկի դռների երկու պատուհանների դիրքը պետք է լինի էլեկտրակառավարվող: Ավտոմեքենան պետք է համալրված լինի նաև վարորդական գործիքների նվազագույն հավաքով և հիդրավլիկ ամբարձիկով: Բժշկական խցիկում պետք է տեղադրվեն հիվանդի տեղափոխման ծալվող ոտքերով սայլակը և բժշկական սարքեր՝ համաձայն ստորև նշված ցանկի: Հագեցված պետք է լինի առնվազն հետևյալ բժշկական սարքերով ՝ թոքերի արհեստական օդափոխության սարք, խնամյալի մոնիտոր, ԷՍԳ, բժշկական արտաածիչ, ավտոմատ ներարկիչ, դեֆիբրիլյատոր: **Թոքերի արհեստական օդափոխության սարք** պետք է լինի՝ Նախատեսված շտապօգնության մեքենաներում շահագործման համար; Շարժական, շարժաբերը էլեկտրական / ներկառուցված օդամղիչով/, ավտոնոմ աշխատանքի տևողությունը լիովին լիցքավորված մարտկոցով առնվազն 12 ժամ: Աշխատանքային մոդերը առնվազն՝ ACMV (PCV/VCV/PRVC); SIMV (PCV/VCV/PRVC); SPONT (CPAP, BPAP);VG- Volume Guarantee; B-Lev (Bi-Phasic, APRV); Ինվազիվ և ոչինվազիվ օդափոխություն տարբեր մոդերով ապահովող; NPPV / ոչ ինվազիվ դրական ճնշումով օդասփոխություն/ OFF/LOW/HIGH մինչև 30լ/ր կորուստները հատուցմամբ ; VG մոդում – VtG (Tidal Volume Guarantee) և MVG (Minute Volume Guarantee) ; SIGH - խորը շնչում ֆունկցիան ապահովող; Tidal Volume (Միանավագ շնչառության ծավալների) տիրույթը առնվազն 30-2200մլ.; Breath Rate (շնչառության հաճախություն) տիրույթը առնվազն 1-99 շ/ր.; PC ռեժիմում ճնշման կարգավորման տիրույթը առնվազն 5-80 cm.H2O PSV ռեժիմում ճնշման կարգավորման տիրույթը առնվազն 0-60 cm.H2O PEEP/CPAP ռեժիմում ճնշումների տիրույթը առնվազն 0-40 cm.H2O Pressure Trigger -20 մինչև -0.1 cm.H2O Rise Profile առնվազն 5 մակարդակներ PSV Ti տիրույթը առնվազն 0.1-3 վրկ. PSV Flow Termination տիրույթը առնվազն 10%-90% VC - Time/Flow Շնչառական օդի ալիքաձև հոսքը /Flow Waveform/ - Square/Descending Թթվածնի խտության տվիչի չափաբերում /FiO2 sensor Calibrate/ Երաշխավորված շնչառական ծավալի կարգավորմամբ ռեժիմներում /VG mode controls/՝ Target VtG – 30-2200մլ.; PSV min, 0-60 cm H2O; PSV max, 5-60 cmH2O; Trigger Delay B-lev Controls ռեժիմում: P High 30-60 cmH2O; P low 0-30 cmH2O; T High (Ti) 2-15 վրկ.; T low 0.5-5 վրկ.; Inverse I:E -- 30:1 Տագնապի ազդանշանավորում /Alarms/ պարտադիր /automatic/ - Օդատարերի անջատում, մարտկոցի անբավարար լիցքավորվածություն, O2 բացակայություն, շնչառական ծավալի անբավարարություն և ընտրովի /variable/ - առնվազն 10 բնութագրերի ընտրության հնարավորությամբ: Մոնիտորման ենթակա բնութագրեր /Monitored parameters/ առնվազն 19 բնութագրեր ընտրովի: Հատուկ ֆունկցիաների պատադիր արկայություն՝ Buzzer Level – LOW/HIGH; Արագ մեկնարկ /Quic Start/ – առնվազն 5 նախորոք սահմանված ռեժիմներ, ռուսերեն լեզվով ինտերֆեյսի առկայություն: Էլեկտրական սնուցումը՝ 100-220Վ, 50 Հց. ստանդարտ ցանցից; 12-15 Վ հաստատուն հոսանքի ցանցից; ներդրված մարտկոցից առնվազն 12 ժ.: Լիցքավորման տեևողությունը ոչ ավելի քան 3 ժ. Քաշը՝ ոչ ավելի քան 7 կգ.: Արտաքին չափերը՝ ոչ ավելի քան 30x30x25 սմ.: **Խնամյալի մոնիտոր** Շարժական,ՀԲ գունավոր, առնվազն15՞ էկրանով , չափվող պարամետրերը՝ ԷՍԳ, ոչինվազիվ արյան զարկերակային ճնշում, սրտի բաբախումների թիվը, ռեսպիրացիա /շնչառություն/, սատուրացիա SpO2, մարմնի ջերմաստճանը: Միաժամանակ գրանցվող ինֆորմացիայի համար տրամադրվող գրանցուղիների թիվը՝ 10 կամ ավելի: ԷՍԳ ՝ ստանդարտ 5 էլեկտրոդներով միաժամանակ 6 հեռացումների գրանցմամբ; գրանցման արագությունները՝ 6.25, 12.5, 25.0, 50.0 մմ/վրկ. Սրտի բաբախումների վերահսկում առնվազն 10-300 1/ր տիրույթում, մեծահասակների և 10-350 1/ր տիրույթում պատանիների; ճշտությունը +/- 1 զարկ: ST սեգմենտի վերահսկում առնվազն -2.0մՎ-+2.0մՎ տիրույթում 0.01 մՎ ճշտությամբ: Ռեսպիրացիայի վերահսկում առնվազն 0-150 շ/ր տիրույթում: Մարմնի ջերմաստճանի վերահսկում առնվազն 0.0-50.0 Ց.աստճ տիրույթում 0.1 Ց.աստճ. ճշտությամբ: Սատուրացիայի վերահսկում 0-100 % տիրույթում, 70-100 % տիրույթում 2% ճշտությամբ: Սրտի բաբախումների թվի վերահսկում 25-250 զ/ր +/- 1 զ/ր ճշտությամբ: Ոչ ինվազիվ զարկերակային արյան ճնշման վերահսկում՝ 10-270 մմ.սն.ս. տիրույթում +/-3մմ.սն.ս. ճշտությամբ: Բնութագրի պարբերաբար ավտոմատ կերպով վերահսկում առնվազն 1,2,3,4,5,10,15,30,60,90ր, 2,4,8 ժ. պարբերականությամբ: Լուսա-ձայնային տագնապային ազդանշանավորում նախապես ընտրված բնութագրերը սահմանված տիրույթները գերազանցելու պարագայում:

		Առնվազն 160 ժամերի ընթացքում բոլոր վերահսկվող բնութագրերի հիշողության և վերարտադրման հնարավորությամբ, 1-30 րոպե տևողությամբ, այդ թվում նաև ԷՍԳ. Էլեկտրասնուցումը՝ 100-220Վ 50Հց ստանդարտ ցանցից: Ավտոնոմ աշխատանք ներդրված մարտկոցով առնվազն 120 րոպեների ընթացքում: Մարտկոցի լիցքավորման տևողությունը ոչ ավելի քան 6 ժամ: Արտաքին չափերը՝ ոչ ավելի քան 370x335x175 մմ.: Քաշը՝ ոչ ավելի քան 5.5կգ. **Էլեկտրասրտագրիչ** Դյուրակիր,թվային, գրանցվող ստանդարտ հեռացումների թիվը՝ 12 : Առնվազն 4.5"TFT LCD-դիսպլեյով, միաժամանակ առնվազն 6 հեռացումների գրաֆիկները դիտելու համար: Միաժամանակ գրանցվող հեռացումների թիվը 3 , Գրանցման եղանակը՝ ջերմային, Ջերմազգայուն գրանցման թղթի լայնությունը՝ ոչ պակաս 80մմ: Կետային ջերմատպիչը ապահովումը 1 մմ վրա առնվազն 8 կետի տպում ուղղայաց և 40 կետ հորիզոնական ուղղություններով: Տպագրելու ավտոմատորեն և /կամ/ ձեռքով հրահանգավորում, Էլեկտրոդների անջատված վիճակների ավտոմատորեն գրանցում, գրանցման արագությունը փոփոխվող ըստ պահանջի ,5.6, 6.25, 10.0, 12.5, 25, 50 մմ/վ© +/- 3%: Միոգրաֆիկ և սնուցող ցանցի հաճախականությունների զտիչ, Էլեկտրասնուցումը ներկառուցված վերալիցքավորվող մարտկոցից՝ առնվազն 2ժ ունակությամբ և 220 Վ 50Հց.: Ներկառուցված հիշողության նվազագույն ծավալը պետք է բավարարի 100 խումբ ԷՍԳ հիշողություն: **Ավտոմատ ներարկիչ** Ավտոմատ ներարկչային ներարկիչ միաժամանակ առնվազն երկու ներարկիչներով համապատասխան դեղորայք ներարկելու համար: Սարքը պետք է ապահովի 10, 20, 30, 50/60 մլ. առնվազն 25 երկրի այդ թվում առնվազն 5 միջազգային ստանդարտների արտադրության ներարկիչների օգտագործումը: Բոլուսային հոսքը պետք է ապահովվի 200 մինչև 1600 մլ/ժ արագությամբ, կախված օգտագործվող ներարկիչից: Ներարկման ճշտությունը +/-2% կամ ավելի լավ: Ներարկման միավորները՝ խնամյալի քաշից կախված մգ/կգ/ր; մգ/կգ/ժ և այլն: KVO 0.1-1մլ/ժ: Անտիբոլուս, օկլյուզյաների վերաբերյալ զգայունության երեք աստճան 0.02 մինչև 0.14 ՄՊաս. տիրույթում: Սնուցումը ներկառուցված վերալիցքավորվող մարտկոցից, որը պետք է ապահովի առնվազն 7ժ անընդմեջ աշխատանք միաժամանակ երկու ներարկիչների և 110-220Վ 50 Հց. Ստանդարտ ցանցից: Չափերը՝ ոչ ավելի քան 330*130*230մմ.: Քաշը ոչ ավելի քան 4.5 կգ.: **Դեֆիբրիլյատոր** Դյուրակիր,արտաքին ասինխոն դեֆիբրիլյատոր: • Էներգիայի քայլերը: 20,50,100,160,250,360 Ջոուլ • Լիցքաթափում: 45 հարված 360 Ջոուլով, Լիցքավորման ժամանակը: - 2 վրկ մինչև 100 Ջոուլ - 4.5 վրկ մինչև 360 Ջոուլ -Երեխաների համար նախատեսված փայտիկներ - Հարմար է մեծահասակների և երեխաների համար (Ռեֆերենս նորմաներ՝ ERC 2005 քաշից կախված Ջոուլների կիրառման). - կոմպակտ է և դյուրակիր: PRIMEDIC DEFI-B կամ համարժեք, հեշտ տեղափոխվող է և պատրաստ է օգտագործման ցանկացած վայրում • մարտկոցները: 14.4V/1.4 Ah • Լիցքավորման ժամանակը: 3.5 ժամ • Անվտանգությունը: Էներգիայի ներքին լիցքաթափում յուր.15 վրկ. • Ներքին ինքնաստուգում և սխալի հայտնաբերում • Պաշտպանության աստիճանը՝ II, տեսակը BF • Հիմնական լարումը: 200-240 Վ 50/60 Հց կամ 110 Վ • Չափսերը: 40 x 48 x 12 սմ (Խ x L x Բ) • Քաշը: 8.5 կգ **Արտածծիչ վիրաբուժական** Դյուրակիր, արտածծման արտադրողականությունը օդի հաշվարկով առնվազն 15 լ/ր.: Միանվագ արտածծվող հեղուկի քանակը 1 լ, առավելագույն վակուումը՝ առնվազն 750 մմ.սնդ.սյան., վակուումի կարգավորման տիրույթը 0"750 մմ.սնդ. սյան., Էլեկտրասնուցումը՝ 220 Վ. 50 Հց ստանդարտ ցանցից կամ 12Վ հաստատուն հոսանքի աղբյուրից: Ներկառուցված մարտկոցով: Օժանդակ հագեցում՝ **Վերակենդանացման հավաքածու կոշտ պայուսակով** Հավաքի կազմը՝ Արտածծիչ ձեռքի, թթվածնի բալոն 0.2լ; ճնշման կարգավորիչով, թոքերի ձեռքի արհեստական օդափոխության բալոն /ԱՄԲՈՒ/, լարինգասկոպի հավաք, էնդոտրախեալ խողովակ, օդատար բերանի, սվիգմանոմետր ստետասկոպի հետ, ջերմաչափ, մուրճ ախտորոշման, լապտեր, բերան բացիչ, ներարկիչ, ներերկման կանուլա, տուտնիկետ, էլաստիկ բինտ, ձեռնոց ստերիլ, ադհեզիվ պլաստիր, սրվակների պնակ **Խնամյալի տեղափոխման սայլակ** Խնամյալի տեղափոխման սայլակը պետք է հարմար լինի մեքենայի բժշկական խցիկ և խցիկից դուրս ապահով տեղափոխելու համար: Սալակի բեռնունակությունը պետք

		է լինի առնվազն 220 կգ.: Սայլակի բարձրությունը և ոտքերի դիրքերը պետք է լինեն կարգավորվող: Սայլակը բժշկական խցիկ բեռնելուց և արտաբեռնելուց ոտքերը պետք է ավտոմատորեն համապատասխան դիրքավորվեն: Սայլակի պարկելատաղը պետք է ունենա լվացվող և ախտահանվող ներքնակ: Սայլակը պետք է երկու կողմից ունենա խնամյալին ընկնելուց պահպանող ծալվող պարիսպներ: Սայլակի գլխամասի դիրքը պետք է լինի կարգավորվող: Սայլակը պետք է հագեցված լինի ամրագոտիներով խնամյալին ապահով սևեռելու համար: Էլեկտրակերպափոխիչ Էլեկտրական լարումների կերպափոխման տիրույթը - 12 Վ. հաստատուն / 220 Վ. փոփոխական 50 Հզ. հաճախականության, Հզորությունը շարունակական առնվազն 1000 Վ.Ա., Թթվածնի ռամպա՝ առնվազն 40 լիտր ընդհանուր ծավալով 150 Ատմ. ճնշման թթվածնի պահոցով: Թթվածնի մատակարարման երկու կետ՝ թոքերի արհեստական օդափոխության սարքի սնուցման և դիմակային ինհալյացիայի համար: Կաթիլային ներարկումների համար առաստաղային կախիչ: Ծալովի պատգարակ – 1 հատ Իմոբիլիզացիոն սևեռադողերի հավաք – 1 հավաք Օգտագործված ներարկիչների հավաքման համար պնակ – 1հատ

- **Ծանոթություն՝** *Բժշկական նշանակության սարքավորումները պետք է ունենան.*
- *Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:*
- *Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:*
- *Մեքենան պետք է լինի առնվազն 2016թ.-ի արտադրության, երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի: Մեքենային հետ պետք է տրամադրվեն մեքենայի անձնագիրը և երաշխիքային սպասարկման անձնագիրը:*
- *Ձեռք բերվող ապրանքատեսակը հանդիսանում է հիմնական միջոց ուստի անհրաժեշտ է բժշկական սարքավորումների համար ներկայացնել 1 տարվա երաշխիք:*
- *Մատակարարման վայր սահմանել ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Աբովյան)*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիտեք» ՍՊԸ

ա/ձ՝ 000181644

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված № 2
№ ՇՀԱՊՁԲ-9/17-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017Թ.

Հ.Բ/հ	Անվանում	Չ/մ	Քանակ	Գին	III եռամսյակ /ոչ ուշ քան 30.11.2017թ./
1	Հատուկ մասնագիտացված մեքենաներ / **Ռեանիմոբիլ** /	հատ	1	36,000,000	1

Հավելված № 3

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017Թ,

Հ.Բ/հ	CPV	Անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը	Նախատեսվում է ֆինանսավորել ըստ ամիսների /ոչ ուշ քան 10/12/2017թ./							Գումար
						VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1	34111180/1/2/4	Հատուկ մասնագիտացված մեքենաներ / **Ռեանիմոբիլ** /	հատ	1	36,000,000	36,000,000	36,000,000	36,000,000	36,000,000	36,000,000	36,000,000	36,000,000	36,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ
«ՄեդիտեքՍՊԸ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված № 4
№ ՇՀԱՊՁԲ-9/17-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
№ ՇՀԱՊՁԲ-9/17-1 պայմանագրի

ԱԿՏ №

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
——————————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ——— -ին կնքված № ————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ———— — -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

———————————— ————————————
ազգանուն, անուն ազգանուն, անուն

———————————— ————————————
ստորագրություն ստորագրություն